ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

3 հոկտեմբերի 2017 թվականի **թիվ 131** քաղ. Մոսկվա

Այն կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) եւ (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին) ներկայացվող, որոնց տարածքում իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանում, ավարտվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը, եւ (կամ) անցկացվելու է մաքսային հսկողություն, ինչպես նաեւ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի տրանսպորտային միջոցներին եւ աշխատողներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 433-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ այն կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) եւ (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների

մասերին) ներկայացվող, որոնց տարածքում իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանում, ավարտվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը, եւ (կամ) անցկացվելու է մաքսային հսկողություն, ինչպես նաեւ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի տրանսպորտային միջոցներին եւ աշխատողներին ներկայացվող պահանջները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի հոկտեմբերի 3-ի
թիվ 131 որոշմամբ

ՊԱՀԱՆՋՆԵՐ

այն կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) եւ կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին) ներկայացվող, որոնց տարածքում իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանում, ավարտվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը, եւ (կամ) անցկացվելու է մաքսային հսկողություն, ինչպես նաեւ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի տրանսպորտային միջոցներին եւ աշխատողներին ներկայացվող

I. Այն կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) եւ (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին) ներկայացվող պահանջներ, որոնց տարածքում իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանում, ավարտվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը, եւ (կամ) անցկացվելու է մաքսային հսկողություն

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող այն իրավաբանական անձը (այսուհետ՝ իրավաբանական անձ), որին տրվում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ երկրորդ եւ երրորդ տիպի վկայական, պետք է այն կառույցները, շինությունները (շինությունների մասերը) եւ (կամ) բաց հրապարակները

(բաց հրապարակների մասերը), որոնց տարածքում իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանում, ավարտվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը, եւ (կամ) անցկացվելու է մաքսային հսկողություն (այսուհետ՝ լիազորված տնտեսական օպերատորի տարածք), օգտագործի պայմանով, որ դրանց հետ կապված կապահովվի՝

ա) մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների պահպանվածությունը.

բ) առանց մաքսային մարմնի թույլտվության՝ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների բեռնաթափման, փոխաբեռնման (վերաբեռնման) եւ բեռնային այլ գործողությունների կատարումը թույլ չտալը.

գ) ապրանքների եւ տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողություն անցկացնելու հնարավորությունը:

2. Իրավաբանական անձը պետք է լիազորված տնտեսական օպերատորի տարածքում ապահովի հետեւյալի առկայությունը՝

ա) կոշտ ծածկույթ (բետոնից, ասֆալտից կամ այլ տիպի), ներառյալ՝ նշված տարածքին հարող բեռնման-բեռնաթափման հրապարակները.

բ) տրանսպորտային միջոցների կայանատեղիներ.

գ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) ամբողջ երկայնքով ամբողջովին պարսպումը.

դ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային կարգավորման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված մաքսային հսկողության գոտիների նշումներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 319-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան.

ե) ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային տեսազննում կամ մաքսային զննում անցկացնելու համար առանձնացված վայր.

զ) դեպի նշված տարածք տանող, տեխնիկապես սարքին վիճակում գտնվող մերձատար ուղիներ.

է) կազմակերպված անցագրային այնպիսի ռեժիմ եւ պահպանություն, որոնց դեպքում բացառվում են նշված տարածքում տեղակայված օբյեկտներ, այդ թվում՝ ապրանքների բեռնման (բեռնաթափման) եւ պահպանման վայրեր եւ տրանսպորտային միջոցներ չթույլատրված մուտքը, եւ որոնք ապահովում են՝

իրավաբանական անձի աշխատողների մուտքը նշված օբյեկտներ՝ նրանց նույնականացումն անցկացնելու դեպքում.

իրավաբանական անձի աշխատողներ չհամարվող անձանց մուտքը նշված օբյեկտներ՝ նրանց նույնականացումը եւ գրանցումն անցկացնելու դեպքում.

իրավաբանական անձի մոտ իրենց գործունեությունը դադարեցրած աշխատողների մուտքը նշված օբյեկտներ եւ տեղեկատվական համակարգեր.

ը) տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի) եւ անձանց մուտքի (ելքի) այնպիսի հսկողության համակարգեր, որոնք սարքավորված են շուրջօրյա ռեժիմով գործող տեսահսկման համակարգերով, որոնք թույլ են տալիս 30 օրացուցային օրվա ընթացքում իրականացնել տեսատեղեկատվության դիտում, ձայնագրում եւ պահպանում.

թ) հրդեհային եւ պահակային ազդասարքեր՝ բացառությամբ բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի).

ժ) լուսավորություն, որը թույլ է տալիս ապահովել տեսահսկումը.

ժա) ապրանքների տրանսպորտային փոխադրման համար օգտագործվող՝ մասնավորապես տակդիրների, հենարանների վրա եւ այլ բազմաշրջանառու տարաներում նշված տարածքում տեղադրելու համար նախատեսվող ապրանքները կշռելու հնարավորություն ապահովող կշռման սարքավորումներ (չափման միջոցներ)՝ կշռման սահմանաչափով եւ չափման ճշգրտության ցուցանիշներով, որոնք համապատասխանում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը.

ժբ) ապրանքների մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ բեռնման-բեռնաթափման տեխնիկա եւ մեխանիզմներ.

ժգ) այնպիսի շինություններ (վայրեր), որոնք հագեցված են գրասենյակային սարքավորումներով եւ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորություններն իրականացնելու ժամկետով տրամադրվող կապի միջոցներով՝ նրանց կողմից մաքսային գործառնություններ իրականացնելու, մաքսային հսկողություն անցկացնելու եւ մաքսային փաստաթղթերի ձեւակերպման ժամանակ (անհրաժեշտության դեպքում նշված շինությունները (վայրերը) կարող են տեղակայվել անմիջապես նշված տարածքի մոտ):

II. Իրավաբանական անձի տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջներ

3. Ապրանքների տրանսպորտային փոխադրում իրականացնող (փոխադրող համարվող) իրավաբանական անձի տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների միջազգային փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջներին՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 364-րդ հոդվածին համապատասխան:

III. Իրավաբանական անձի աշխատողներին ներկայացվող պահանջներ

4. Իրավաբանական անձի աշխատողները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին՝

ա) այն աշխատողները, որոնց պաշտոնական պարտականությունները ներառում են մաքսային գործառնությունների կազմակերպումը եւ (կամ)

իրականացումը, պետք է մաքսային գործի ոլորտում մասնագիտական պատրաստվածություն եւ (կամ) տվյալ ոլորտում առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ունենան:

Հայաստանի Հանրապետությունում, ի լրումն նշված պահանջների, իրավաբանական անձի աշխատողները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների.

բ) իրավաբանական անձի անվտանգության կազմակերպման եւ լիազորված տնտեսական օպերատորի տարածքի պաշտպանության համար պատասխանատու աշխատողները պետք է անվտանգության ապահովման եւ պաշտպանության ոլորտում մասնագիտական պատրաստվածություն եւ (կամ) տվյալ ոլորտում առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ունենան.

գ) տեղեկությունների պաշտպանության միջոցներ պարունակող ավտոմատացված տեղեկատվական համակարգի կիրառման համար պատասխանատու աշխատողները պետք է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտական պատրաստվածություն եւ (կամ) տվյալ ոլորտում առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ունենան:

5. Իրավաբանական անձը կարող է չունենալ սույն պահանջների 4-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանող աշխատողներ, եթե անհրաժեշտ աշխատանքների կատարման համար պայմանագրային հիմունքներով ներգրավվում են մաքսային ներկայացուցիչներ, մասնագիտացված պահակախմբային կազմակերպությունների եւ տեղեկատվական եւ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատողներ: